



<https://printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Մեալոնատկինազի անբավարարություն (ՄԿԱ) (կամ հիպեր IgD համախտանիշ)

Տարբերակ 2016

3. ԱՌՕՐՅԱ ԿՅՍԼԵԸ:

3.1 Ինչպե՞ս կարող է հիվանդությունը ազդել երեխայի և նրա ընտանիքի առօրյա կյանքի վրա:

Հաճախակի նոպաները խանգարում են նորմալ ընտանեկան կյանքը և կարող են ազդել հիվանդի կամ նրա ծնողների աշխատանքի վրա: Հաճախ ճիշտ ախտորոշումը զգալի ուշացումով է դրվում, որը առաջացնում է ծնողների անհանգստությունը և երբեմն կատարվում են ոչ անհրաժեշտ բժշկական միջամտություններ:

3.2 Ի՞նչ կասեք դպրոցի մասին:

Հաճախակի նոպաները դպրոց հաճախելու համար խնդիրներ են առաջացնում: Ուսուցիչները պետք է տեղեկացված լինեն հիվանդության մասին և, թե ինչ պետք է անեն այն դեպքերում, երբ նոպան սկսվել է դպրոցում:

3.3 Ի՞նչ կասեք սպորտի մասին:

Չկա որևէ սահմանափակում սպորտով զբաղվելու համար: Սակայն, սպորտային խաղերից և մարզումներից հաճախակի բացակայելը կարող է խանգարել մրցակցային խմբային սպորտաձևերին մասնակցելուն:

3.4 Ի՞նչ կասեք սննդակարգի մասին:

Չկա որևէ յուրահատուկ սննդակարգ:

3.5 Կարո՞ղ է կլիման ազդել հիվանդության ընթացքի վրա:

Ոչ:

3.6 Կարո՞ղ է երեխան պատվաստվել:

Այո, երեխաները կարող են և պետք է պատվաստվեն, անգամ եթե այն կարող է հրահրել տենդի նոպա:

Սակայն, եթե երեխան բուժում է ստանում, բուժող բժիշկը պետք է տեղեկացված լինի կենդանի թուլացված պատվաստանյութերով պատվաստումներից առաջ:

3.7 Ի՞նչ կասեք սեռական կյանքի, հղիության և հակաբեղմնավորիչների մասին:

Մևալոնատկինազի անբավարարությամբ հիվանդները կարող են ունենալ նորմալ սեռական կյանք և իրենց սեփական երեխաները: Հղիության ընթացքում, նոպաները նվազում են: Մևալոնատկինազի անբավարարության գենը կրող զուգընկերոջ հետ ամուսնանալու հնարավորությունը չափազանց քիչ է, բացառությամբ եթե զուգընկերը հիվանդի ազգական է հանդիսանում: Եթե զուգընկերը մևալոնատկինազի անբավարարության գենի կրող չէ, ապա նրանց երեխաները չեն կարող ունենալ մևալոնատկինազի անբավարարություն: